

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 3/1

21 հունվարի 2014 թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով Ա/Ձ Անուշ Օհանյանի 08.01.2014 թ-ի դիմում-բողոքը և վերջինիս առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

Ա/Ձ Անուշ Օհանյանը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացրել է բողոք, որով խնդրել է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ 16.12.2013 թ-ի թիվ 1108584 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ): Այնուհետև, Հանձնաժողովի նախագահին հասցեագրված 21.01.2014 թ-ի դիմումով Ա/Ձ Անուշ Օհանյանը հայտնել է, որ ստուգման ակտի վերաբերյալ առարկություններ չունի և հրաժարվում է 08.01.2014 թ-ի դիմում-բողոքից:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն. «Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից»:


Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Անուշ Օհանյանի բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

Ա/Ձ Անուշ Օհանյանի 08.01.2014 թ-ի դիմում-բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ